ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

07.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ՍՑ-ԱՄ-2018/46

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2018թ. թիվ 03/26-3/7219-18 գրությամբ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 13.04.2018թ. թիվ 01/61-8621 գրության հիման վրա, 18.04.2018թ. թիվ 03/26-3/7219-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 03.05.2018թ. գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/57» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն:

Համաձայն «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/57» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 10:00 նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի՝ 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 5.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ եթնակետի պահանջներով, ծանուցել առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներին՝ սահմանված ժամկետում ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է՝ 22.03.2018թ. ժամը 13:31 Ընկերության «armeps» էլեկտրոնային համակարգում գրանցված «best.building@mail.ru» էլեկտրոնային հասցեից բաց մրցույթի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի «gagik.huroyan@yerevan.am» էլեկտրոնային հասցեին ուղարկել է պահանջված որակավորման բոլոր փաստաթղթերը: Ի հավաստում վերոհիշյալի՝ ներկայացվում են համապատասխան էլեկտրոնային էջերի արտատպումները: Միևնույն ժամանակ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն պատրաստակամություն է հայտնել ՍՑ-ԱՄ-2018/46 ընթացակարգով հրավիրվող նիստի ժամանակ բացել Ընկերության best.building@mail.ru էլեկտրոնային հասցեն և ապացուցել, որ Ընկերությունը սահմանված ժամկետում ուղարկել է պահանջված որակավորման բոլոր փաստաթղթերը:

Սակայն «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/57» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 27.03.2018թ. ժամը 10:00 նիստի թիվ 4 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Ուստի գնահատող

հանձնաժողովը մերժել է «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի հայտը և որոշել է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնել լիազոր մարմնին՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ավելին, Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.04.2018թ. թիվ 01/61-8621 գրությամբ հայտնել է, որ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարըէլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, Ընկերությունը գտնում է, որ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն պատշաճ կատարել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, այն է՝ ծանուցումը ստանալուց հետո սահմանված ժամկետում, 22.03.2018թ. գնահատող հանձնաժողովի համապատասխան էլեկտրոնային հասցեին ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող համապատասխան փաստաթղթերը: Սակայն Ընկերության կամքից անկախ, անհասկանալի տեխնիկական պատճառներով, գնահատող հանձնաժողովը, ըստ երևույթի, չի ստացել Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը և մերժել «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի հայտը:

Փաստացի տվյալ դեպքում առկա չէ Ընկերության կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների խախտում, քանզի նշված ենթակետի համաձայն՝ գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել պահանջված փաստաթղթերը, իսկ ինչպես վկայում են ներկայացված ապացույցները, տվյալ դեպքում առկա է «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում պատվիրատուի համապատասխան էլ. հասցեին ուղարկելու փաստը:

Ընկերությունը գտնում է, որ նման փաստական հանգամանքներում «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանզի Ընկերությունը, ինչպես արդեն նշվել է, կատարել է որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում պատվիրատուին ներկայացնելու պարտավորությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը գտնում է, որ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, ուստի Ընկերությունը խնդրել է «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/46 ընթացակարգի շրջանակներում 23.04.2018թ. ժամը 10:30-ին, 26.04.2018թ. ժամը 11:05-ին և 05.05.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 26.04.2018թ. ժամը 11:05-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.04.2018թ. թիվ 01/61-8621 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/57» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն:

Երևանի քաղաքապետարանը, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ծանուցել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/46 ընթացակարգի շրջանակներում 23.04.2018թ. ժամը 10:30-ին, 26.04.2018թ. ժամը 11:05-ին և 05.05.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/46 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/46 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի բակային տարածքների բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/57» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով, որին ***21.03.2018թ.*** սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացված որոշմամբ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

4. «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել Ընկերության «armeps» էլեկտրոնային համակարգում գրանցված «best.building@mail.ru» էլեկտրոնային հասցեի համապատասխան էջի քաղվածքը, համաձայն որի Ընկերությունը ***22.03.2018թ.*** Ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի «gagik.huroyan@yerevan.am» էլեկտրոնային հասցեին ուղարկել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.04.2018թ. թիվ 03/26-3/7219-18 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 13.04.2018թ. թիվ 01/61-8621 գրությունը և կից փաստաթղթերը, «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի 03.05.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի բակային տարածքների բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-

ԲՄԱՇՁԲ-18/57» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/57» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ***21.03.2018թ.*** սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ծանուցել է «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնել ***«gagik.huroyan@yerevan. am»*** էլեկտրոնային հասցեին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացված որոշմամբ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է Ընկերության «armeps» էլեկտրոնային համակարգում գրանցված «best.building@mail.ru» էլեկտրոնային հասցեի համապատասխան էջի քաղվածքը, ***համաձայն որի Ընկերությունը 22.03.2018թ. Ընթացակարգի հրավերում, ինչպես նաև ծանուցման մեջ նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի «gagik.huroyan@yerevan.am» էլեկտրոնային հասցեին ուղարկել է որակավորման չափանիշները հիմնավորող պահանջված փաստաթղթերը:***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Գտնում եմ, որ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն, առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով կատարել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/57» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում չեն խախտվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջները, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2018թ. թիվ 03/26-3/7219-18 գրությամբ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02266584) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**